ՄՈՒՐԱՑԱՆ

(1854-1908)

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Աշխարհի գալուց փոքր-ինչ հետո Գրիգորին վիճակված էր հաղթահարել ծանր փորձություն: Ինչպես պատմում է կենսագիրը, նա երեք տարեկան էր, երբ ծննդավայրում բռնկվում է սև ծաղիկ կոչվող մահաբեր հիվանդությունը, որին զոհ են գնում շատերը: Վարակվում է նաև փոքրիկը, հետո անշնչանում: Ծնողները, կարծելով, թե նա արդեն մահացել է, ըստ ընդունված կարգի, երեխայի մարմինը դուրս են հանում տնից՝ վարակը հեռացնելու համար: Երջանիկ բարեբախտությամբ, սակայն, այն պահին, երբ քահանայի մշակները պատրաստվում էին դռան շեմից վերցնել դիակը, փոքրիկն արթնանում է և սկսում լաց լինել: Նա հրաշքով փրկվել էր:

ՁՎԱՐՃԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պատմում են, որ մի անգամ խմբագրությունում բազմամարդ ժողով էր՝ նվիրված արևելյան երկրներում կնոջ ազատագրության հարցին: Տեղի է ունենում բուռն քննարկում: Խոսում են շատերը, վիճաբանում և գտնում, որ, այո՛, կինը ճնշված է Արևելքում: Պետք է խորհել այդ մասին, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել և վերջ տալ

անհավասարությանն ու հետամնացությանը:

Լուռ էր միայն Մուրացանը: Նա շարունակ ինչ-որ բան էր նկարում թղթի վրա: Երբ խոսողներն ավարտում են իրենց ելույթը, դիմում են նրան՝ ցանկանալով իմանալ նաև վիպասանի կարծիքը: Այդ ժամանակ Մուրացանը ցույց է տալիս է իր նկարածը: Այնտեղ պատկերված էր փոշոտ ճանապարհով անցնող մի ուղտ՝ վրան արևելյան զարդերով պճնված մի խանում, իսկ առջևից, ուղտի սանձը բռնած, քայլում էր մի տղամարդ՝ հավանաբար կնոջ ամուսինը՝ տանջալլուկ, հոգնաբեկ, գլխիկոր: Ներկաներին ցույց տալով նկարը՝ Մուրացանը հարցնում է.

– Դուք սրա ի՞նչն եք ուզում ազատագրել:

«ԱՌԱՔՅԱԼԸ» ՎԻՊԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

«Առաքյալը» վիպակում Մուրացանը պատկերում է երեք տարբեր միջավայր՝ ժամանակի ուսանողական շրջան, հայ գյուղի տխուր իրականություն և թիֆլիսյան ճոխ կյանք: Դրանցից ամեն մեկը յուրովի է ազդում գլխավոր հերոսի՝ Պետրոս Կամսարյանի վրա՝ բացահայտելով նրա կերպարը: Պետրոսը նախ տարվում է ռոմանտիկ գաղափարներով ու կարծում, թե այդքանը բավական է հայ գյուղացուն «լուսավորելու» համար: Նա հետո բախվում է գեղջկական կյանքի դժվարություններին՝ դրսևորելով իր հոգևոր սնանկությունն ու տոկունության բացակայությունը: Նախկին ուսանողն այնուհետև մոռանում է երբեմնի գաղափարական սկզբունքները և վերադառնում է նախկին անհոգ կյանքին:

Այսպիսով՝ վիպակն ունի սոցիալական խոր բովանդակություն և բացահայտում է տարբեր խավերի հոգեբանությունն ու հայացքները: Մուրացանն իրեն հատուկ նուրբ երգիծանքով ևս մեկ անգամ հաստատում է այն գաղափարը, որ մարդու ով լինելու մասին վկայում են ոչ թե նրա խոսքերը, այլ կատարած գործերն ու դրսևորած վարքագիծը: